



ՏԱՅ ՍԿԱՆՈՒՏ

ՕՐԿԱՆ Կ. Ս. Ը. Ս. Ի

ՀԱՒԻԱՔԻԱԾՈՅ

1921 - 1922 ՏԱԽՈՅ

1921

№ 1 - 11

1922

№ 12 - 23

Կ. Պոլիս



ՀԱՅ

ՍԿԱՆՈՒՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Զ. Մ. Ը. Մ.
Վարիչ-Խմբագիր ԿԱՐՕ Գ. ՈՒՆԱԳԼԵԱՆ

Բ. ՏՕՐԻ ԹԻԻ 1

1 ՅՈՒՆԻՍ 1921



ԱՆԿԵՂԾ ԽՕՒԷ
ԱՅՍ ԵՐԿՈՒ ՊԱՏՈՒԱՆԴԱՆՆԵՐՈՒՆ
ՈՐՈ՞ՒՆ ՎՐԱՅ ԿԵՑԱԾ ԵՍ


Չախ կողմինը հաստատուն հիմ մը
ունի, իսկ աջ կողմինը անապահով է և
քու անկումիդ պատճառ պիտի ըլլայ:



Ճառքին մտածուքը րը մարդուս մտքին մէջ
նի պատմականական բառին առջեւ, այն է թէ՛
նկա ու է մէկու մը համար դիրք մ'է, որուն
այ իւրաքանչիւր անձ պէտք է ելլէ, որպէս
ամբողջ աշխարհ կարենայ զինքը տեսնել:
Այս գաղափարը բաւական ճիշդ է, սակայն

պէտք է նկատողութեան առնել թէ՛ երկու տե-
սակ պատմականներ գոյութիւն ունին:
Բայց դժբախտաբար մեզմէ քիչեր կրցած են
հասկնալ թէ՛ ամէնքս ալ իր կարգին պատմա-
դաններու վրայ բարձրացած ենք: Տասը տարի
առաջ երբ ես դեռ Սկաւռութեան փորձառու-

2587



318-2000

թիւնը չունէի. անգլիական սկաուտական կազմակերպութեան նշանաւոր պետերէն մէկը ըսաւ ինծի, ես պէտք է ծայր աստիճան ուշադիր ըլլամ իմ շարժումներու մէջ, որովհետեւ իմ տղաքներս զիս շատ մօտէն կը քննեն և իմ ըրածներս նոյնութեամբ կ'իւրացնեն. կապիկներու խմբակի մը նման:

Երբ ես դեռ դպրոցական տղայ էի, մեր ուսուցիչը միշտ կը կրկնէր թէ մենք ազատ էինք կրկնել այն ամէն բանը զոր պիտի տեսնէինք իրմէ. և ամէնքս ալ ուշադիր կը հետեւէինք մեր ուսուցչին իւրաքանչիւր քայլին, որպէս զի կարող ըլլայինք բռնել զինքը այնպիսի արարքի մը մէջ, որ ան պէտք չէր ընէր միակ նպատակաւ որ երբ անկանոն ընթացքի մը մէջ բռնուէինք, կարենայինք ինքզինքնիս արդարացրել իրեն ըրած որևէ մէկ սխալը հրապարակելով:

Հիմա վերոյիշեալ Սկաուտ պետը և ուսուցիչը՝ երկուքն ալ պատուանդանի վրայ կեցած են: Բնականաբար տղաքը պիտի ուզեն գիտնալ թէ իրենց պետը ինչ տեսակ նիւթերով շինուած պատուանդանի մը վրայ կեցած է, որպէս զի իրենք ալ նոյնը ընտրեն:

Իբր սկաուտ ինչ տեսակ նիւթ կը գործածես քու պատուանդանիդ համար: «Սկաուտ, պէտք է լաւ ըմբռնես թէ պատուանդանի մը վրայ կեցած ես և քու ապրելակերպէդ պիտի դատուիս ուրիշներէն:

Ժողովուրդը Ձեզ ուր որ տեսնայ անմիջապէս Ձեր ընթացքը և սովորութիւնները կը դիտէ. և յետոյ կը քննադատէ և կ'որոշէ թէ դուք՝ հաճելի՞ էք իրեն կամ՝ Ձեր ընթացքը գնահատումի արժանի է թէ ոչ:

Վերը դուք կը տեսնէք երկու պատկերներ որոնցմէ առաջինը կը ցուցնէ ուղիղ՝ և երկրորդը սխալ պատուանդանը, դուք որոշեցէք թէ կեանքի համար ո՞րն է լաւագոյնը այն երկու պատուանդաններէն:

Ամէն ոք ազատ է ուզած պատուանդանին վրայ ելնելու, սակայն սկաուտէ մը կ'սպասուի որ առաջինին վրայ բարձրանայ: Բայց սկաուտ մինակդ մի բարձրանար, մի կարծեր որ մինակ անձ մըն ես, լաւ խմորով օժտուած, մի երեւակայիբ թէ ուրիշներէ աւելի արժանաւոր ես, եթէ այդպէս ընես, քու սկաուտական խոստումդ գործադրած չի պիտի ըլլաս:

Բարձրացիր ուղիղ պատուանդանի վրայ և քու գնահատութիւնը պիտի ընեն:

որդ պատուանդանին վրայ գտնուող ընկերիդ համոզէ զայն վար իջնել իր վտանգաւոր դիրքէն և քաճարացուի զայն՝ քու պատուանդանիդ վրայ իր քու բնկերդ:

Բնաւ մի վախնար որ՝ ուրիշներ կրնան քեզ վրէժքել քու գտնուած տեղէդ, բարութեան պատուանդանին վրայ շատ շատ տեղ կայ ամէնուն համար:

Երբ մէկը առաջին անգամ կը գտնուի նշանաւոր անձերու յիշատակին կանգնուած կոթողներու առջև, որոնք հաստատած են գետնէն շատ բարձր, բնականօրէն կ'եզրակացնեն թէ արժանիք ունեցող մէկը պէտք է ըլլայ այն անձը, որուն արձանը այսպէս ցուցադրուած է, և յիրաւի այդ մեծ արձանը այդ մեծ մարդուն աշխատութեանց վարձատրութիւնն է:

Բնական է ամէնքս չենք կրնար ունենալ նշանաւոր արձաններ՝ կանգնուած մեր յիշատակին համար, որով մենք գո՛հ պէտք է մեանք երբ մարդիկ մեզ համար լաւ խօսին մեր ապրած միջոցին և թէ մեր մահէն վերջ:

Սկաուտէ մը կ'սպասուի հնազանդիլ սկաուտական օրէնքներուն այն վայրկեանէն, ել իր խոստումը կուտայ, այսինքն կը բարձրանայ այն պատուանդանին վրայ որ կառուցուած է 12 հաստատուն և լաւ ատաղձներով որոնք կը կազմեն սկաուտական օրէնքները:


Սկաուտները պէտք է ապրին իրենց խոստումին բարձրութեանը մէջ, այն որ կը թերանայ իր պարտականութեան մէջ, շուտ վար կ'իյնայ իր պատուանդանէն. սկաուտ մը պէտք է ստիպէ ուրիշներուն որ ըսեն «Արժանի է սկաուտ կոչուելու»:

Երբեմն կրնայ ընկեր մը իյնալ իր պատուանդանէն, սակայն երբեք մի խնդար անոր վրայ, ան կրնայ դարձեալ դէպի վեր մագլցիլ, և քու պարտականութիւնդ է օգնել անոր:

Ձեզմէ և ոչ մէկը, առաքինութեան բարձրութեան վրայ գտնուելուն համար ինքզինքը «պալատին թագաւոր»ը նկատելու կամ հպարտանալու ու շլանալու իրաւունք չունի:

Ժողովուրդը ակնածանօք կը դիտէ ձեզ բարձրացած պատուանդանին վրայ ուր շատ տեղ կայ ամենուդ համար. օգնութեան ձեռք երկարեցէ՛ք ամէնուն որոնք ինկած են, բարձրացուցէ՛ք զանոնք, և այն ատեն դիտողները չկարենալով զսպել իրենց հիացումը, մեզ համար սահմանազանութիւնը պիտի ընեն:

Ինչպէս որ ձեզ հետ մէկ մեծութիւն




20392-44

318-207

կայ և չկայ անպատու թիւն խոնարհութեան մէջ,
միշտ մտածէ քու անձիդ մասին և կրկնէ հե-
տեւեալը, չիւնով կ'սպասուի հնազանդի իմ
խոստումներուս, որով պէտք չէ որ յուսախաբ
ընեմ զանոնք, որոնք ինձի կը վստահին և կը
պատուեն ։»

Հետեւողաբար ժ. ԽՕՐԱՍՈՒՆՃԵՂԵ G. S. PICKERING
"The Scout,"



ԱՆԳԼԻՈՅ ԳԱՅՍԺԱՌԱՆԳԸ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒԹԻՆ ԼԱՆԳԷՊ



Անա թէ ինչպէս կ'արտայայտուի, Անգլիացի մեծ Ան-
գլիս Գահաժառանգը, սկաութութեան հանդէպ .

«Իմ վերջին նամբորդութեանս ասեմ, սկաութսա-
կան շարժումին կարեւորութիւնը տեսնելու պա-
տեհութիւնը ունեցայ որ՝ կայսրութեան ամէն կող-
մը սարածուած է. մտաւոր ապագային թէ մայր-
երկրի եւ թէ գաղղաբայերու մէջ աւելի սարած-
ուելու հաւանականութիւնը շատ մեծ է ։»

Իծրադրաբար սխալ կարծիք մը կայ թէ՛ սկա-
ութսական գործը առանց դրամի կրնայ առաջ սար-
ուիլ, ասիկա գործին հոռութեան սխալ ըմբռնում-
ներէն մին է, ընդհակառակը կարեւոր գումարնե-
րու պէտք կայ կազմակերպութեան ծախսերը գոցելու
համար ։ Առկուազն 200,000 անգլիս պէտք է շար-
ժումը շաւ հիմներու վրայ դնելու եւ տեսակաւն-
ցնելու համար ։

Ամէն կողմէ երախտագիտական արտայայտու-
թիւններ կը լսեմ այն մտադրոց հասցեի՛ն՝ որոնք
յօժարութեամբ առաջ սարած են գործը՝ վերջին
սարիներու ընթացքին, միայն նպասակ ունենալով
օգնել՝ իրենց երիտասարդ եղբայրներուն ։

Ուրեմն կը թելադրեմ ամէն անոնց որոնք ինձի
պէս կ'զգան, շայննչ իրենց զգացումը արձանագ-
րուելով Յօտիսն որ՝ պիտի նուիրենք կազմակեր-
պութեան՝ ինչպէս գնահատուի, իրենց սխալելի
գործին ։

Շարժումը որ՝ իմ անձնական փորձառու-
թեամբս գիտեմ՝ շատ կենսական է այս գործը
միշտ աւելու վրայ է, անցեալ սարի յուսածուածէն
շատ աւելցած է անդամներուն թիւը եւ թէ աւելի
շաւ ըմբռնուիլ սկսած է ան ։

Յատուցիկայ սարի, թիւը կրկնապատկելու պէտք
է օգնելով ։

ԷՏՈՒՐԸՑ
Գահաժառանգ Անգլիոյ
եւ ընդ. սկաութս պետ Գալլէսի

Ծ. Խ. — Վերջերս կ'իմանար որ վերի գումարը մեծը
թերուած է ։

ՃԷՄՊՕՐԻԻՆ ԱՌԹԻԻ ԱԻԱԳ ՊԵՏԸ ԿԸ ՊԱՏՄԷ՛ ՊՈՅ - ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ Պ Ա Ց Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

1893-94 տարիներու ընթացքին, այն միջո-
ցին երբ Հուսարներու 13րդ խումբին մէջ կը
ծառայէի, խելամուտ եղայ որ պատերազմող
զինուորները պէտք եղածին չափ գործնական
կերպով մարզուած չէին սովորաբար՝ խաղաղու-
թեան ատեն ։ Հետեւաբար որոշեցի իմ գունդիս
համար անհատական հրահանգուած դասըն-
թացքներ կազմակերպել՝ թէ հետագօտիչ թէ
պատերազմող զինուորներու համար ։

1897 - 98 ին, Անձնապաշտ վիշապախումբերու
5րդ գունդին հրամանատարութիւնը ստանձնած
ըլլալով, նմանօրինակ հրահանգում մը առաջ
տարի - բայց աւելի աղէկ ուսումնասիրուած յա-
տակագիծի մը համաձայն - զինուորներուս թէ
նկարագիրը (այսինքն՝ անհատականութիւնը, անձ-
նավստահութիւնը, վստահելիութիւնը) կազմելու
և թէ անոնց զինտ որական կարողութիւնները
զարգացունելու կրկին նպատակով, նկատելով
որ անոնք, դպրոցէն ելած ատեն, մեծ մասամբ
զուրկ էին այս բարեմասնութիւններէն ։

Իմ դասախօսութիւններս և հրահանգներս
աւելի փութուած են Aids to Scouting անունով
գրքոյկի մը մէջ ։

Հարաւային Ափրիկէի պատերազմին միջոցին
(1899-1900), Սպայակոյտի Պետս, Major Lord
Edward Cecil, Mase Hing ի երիտասարդներուն
մէջէն կազմեց խումբ մը, որ կազմակերպուած
էր աւելի սկաութութեան քան զինուորական
պատրաստութեան հիմերուն վրայ ։ Փորձը կա-
տարեալ յաջողութեամբ պատկուեցաւ ։

Այս փորձը ապացոյց նախ թէ՛ երիտասարդ-
ները շատ շուտ կը սորվին. երբ իրենց հաճելի
հրահանգումի մը ենթարկուած ըլլան. և յետոյ,
թէ՛ անոնք կարծուածէն շատ աւելի կարող են
պատասխանատուութիւն մը ստանձնելու, բա-
ւական է որ վստահութիւն ցոյց տրուի իրենց
հանդէպ ։ Սուրբ սակաւաթիւ երիտասարդներէ
կը բաղկանար, որպէս զի պետք կարող ըլլար
գիտակցօրէն զբաղելու իւրաքանչիւր սկաութով՝
զատ զատ. խմբակներու դրութիւնը հաստատ-
ուեցաւ վեց սքաուտ՝ մէկ պետի առաջնորդու-
թեամբ ։ Երբ Հարաւային Ափրիկէի ոստիկանա-
կան մարմնոյն կազմակերպութեամբ զբաղեցայ,
նոյն մեթոտը կիրարկեցի աւելի մեծ չափով ։
Ուստի, երիտասարդ ենթասպաններուն վրայ



Lt. Colonel Robert Stephenson Smyth Baden Powell
phot. in 1900

Զօր. Բօյսթ, Սթեֆէնսըն Սմիտ Պէյտըն Բաուըլ
Սկաուտութեան հիմնադիրը, 1900ին.

գրուեցաւ պատասխանատուութեան բաժին մը, և խմբակներուն միջև ստեղծուած մրցումը առաջ բերաւ լաւագոյն ոգի մը և բարձրացուց կարողութեանց ընդհանուր մակարդակը: Երիտասարդներուն մարդկային զգացումներուն կոչում եղաւ և անոնց յանձնուեցան պաշտօններ՝ որոնք կ'ապացուցանէին թէ ինչ մեծ վստահութիւն ցոյց կը տրուէր իրենց պատուախնդրութեան մասին: Իրենց համազգեստը կը բաղկանար cow-boyի գլխարկէ մը, չապիկէ մը, կանաչ փողկապէ մը և կարճ տաբատէ մը: Պատուանշաններով (badge) կը քաջալերուէին անոնք որոնք յառաջդիմութիւններ կ'ընէին ծրագրին այս կամ այն մասին մէջ:

1907 ին, սկաուտներու հրահանգումին համար բանակումի մը փորձը ըրի Brownsea կը զգիին մէջ: Փորձը կատարուեցաւ ամէն դասակարգէ երիտասարդներու վրայ. արդիւնքը ակնկալութիւններս գերազանցեց. ուստի որոշեցի գաղափարս առաջ տանիլ:

Այս հրահանգումը հիմնուած էր նոյն այն հրահանգումին վրայ զոր կիրարկած էի զինուորներուն և ոստիկաններուն համար, ինչ ինչ պատշաճ փոփոխութիւններով՝ հրահանգումը մատչելի ընելու համար երիտասարդներուն: Զուլուններուն և ամբիկեան ուրիշ ցեղերու կողմանէ որդեգրուած սկզբունքները որդեգրեցի, սկզբունքներ որոնք կը ցոյցանն մէկ քանինները Եպիկտատի

գաղափարներուն և այն մեթոտներուն զորս զորձ կը դնէին Սպարտացիները և հին Անգղիացիները և Իրլանտացիները՝ իրենց զաւակները կրթելու համար: Ինծի առաջնորդ ունեցայ նաև Ճարտնացիներուն Bushido ն ինչպէս նաև արևմտեան յորերուն մէջէն John Pounds ի մեթոտը՝ այն յոց դաստիարակութեան համար, John ի մեթոտը՝ ֆիզիքական մշակոյթի համար, առանց մոռնալու այն մեթոտները որոնք ներկայիս իզորձ կը դրուին Sir William Smithի, Seton-Thompsonի, Dan Beardի և ուրիշներու կողմանէ:

1908ի յունուարին հրատարակեցի Հրահանգումի Դասագիրքս վեց մասերէ բաղկացած և Scouting for Boys կոչուած: Դասագիրքը դեռ ամբողջովին չի հրատարակուած, Միացեալ-Թագաւորութեան զանազան մասերուն մէջ բազմաթիւ խումբեր կազմուեցան:

Այնպէս կարծած էի թէ սկաուտութիւնը յաւելուածական հրապոյր մը պիտի ըլլար միայն Boys' Brigadesի և Church Lads Brigadeի երիտասարդներուն համար, բայց որովհետև, առանայս մարմիններէն մէկուն պատկանելու, շատ մը երիտասարդներ կը մասնակցէին սկաուտակաշարժումին, յայտնի եղաւ որ ուրոյն կազմակերպութիւն մը կարևոր կը դառնար:

1910ին, սկաուտական շարժումը այնպիսի զարգացում մը ստացած էր (123,930 սկաուտ) որ անհրաժեշտ նկատեցի բանակէն հրաժարիլ սկաուտական ձեռնարկին վարչութիւնը ձեռք առնելու համար:

Ձեռնարկը երիտասարդներուն հաճելի ընծայելու և արկածախնդրական իրենց ճաշակին գոհացում տալու համար, իբր իտէալ անոնց առաջարկեցի արուեստով որսորդներու, թափառաչրժիկ ասպետներու և երկրախոյզերու գործունէութիւնը: Այս դիւցազները, զորս իրենց ցոյց տուի իբր հետեւելի օրինակներ, scout անունով յորջորջեցի:

Վրանաբնակ և նաու մէջ կեանքը երկրախորշի գիտութիւնը և ընտելեան ուսումնասիրութիւնը երիտասարդներուն համար հրապուրի բաներ պիտի ըլլային և միեւնոյն ատեն ուսման և դաստիարակութեան միջոց՝ իր:

Մեքոսը.— հրահանգումը այնպիսի ձև մը չունէր որ երիտասարդը կրաւորապէս ընդունի գիտելիքը, հապա այնպիսի ձև մը ըստ որում երիտասարդը անձնական գործունէութիւն մը ունենայ:

Իրագիւրը.— մասամբ իմ անձնական փորձառութեան, մասամբ ալ ուրիշներուն փորձառու-

թեան վրայ հիմնուելով, փափաքեցայ ընուլ այն թերիները որոնք կը գտնուին դպրոցներէն մեծ մասին կրթական գրութեան մէջ .

1. Ն'արագրին և իմացականութեան մշակումը, առ հասարակ .

2. Չեռական ճարտարութիւն .

3. Յիզիքական զարգացումը և առողջաբանութեան գիտութիւնը .

4. Ուրիշներուն և պետութեան հանդէպ պարտականութիւններ :

Հետևաբար, սկստնական աշխատութիւնները և հրահագները այնպէս մը կազմակերպուեցան որ անձնական գործունէութիւնները զարգանան ըստ թիւ 1, 2, 3ի, և յետոյ անհատականութիւնը համայնքին իսպաս գրուի, և կամ, ուրիշ բառերով, քաղաքացիական ոգին զարգանայ :

Շտուանկեղի)

ՊԷՅՏԸՆ ԸՍՈՒՐԼ,
բարգմ Թ. Թ. Հ

Տիկին Արշակունի Թէոդիկի հետագայ գողտրիկ և սըրտալի գրութիւնը մեզի տրամադրեց Պ. Թէոդիկի իր անձնական նամակէն քաղելով, Թերթիս հրատարակութեան յապաղումին պատճառով թէև քիչ մը ուշ մնաց թոյն գրութեան հրատարակութիւնը, սակայն իրերօղնութեան պէտքը մեզ համար, օրէ օր աւելի շեշտուելուն, շատ յարմար կը գտնենք ձմեռուան եղանակի բարեգործութեան շէ մը, ամառուան մէջ ալ թելադրել մեր սկստններուն : Ծ. Ի.

“ԴԷՊԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ,,



Ճերմակի միապաղաղ տիրապետութիւն մը՝ հնուի լեռնագօտիի ու մօտի անդունդներուն վրայ, Այդ հեռուն Մօն Պլանն է, - իսկ մօտը՝ անվերջ դարուփոսերէ ձեւացած տարածութիւն մը, Եղեւիներու անկանոն շարքեր կը հեծան ձիւնին բարդի-բարդ խաւերուն տակ . ամբողջ անտառը ձեւացած է կարծես Մնունդի Մառերով :

Ինչ յուսահատական է, «սանաթօրիօմ»ի մէջ բանտուած հիւանդին համար, ժամերով նայիլ Բնութեան այս մեծ պատանքին, աներև հորիզոնին և շուրջըրի զառիվերներուն ուրկէ ո՛չ ճամբորդ մը կ'անցնի, ոչ ալ թռչուն մը :

...Սեննակին ցուրտ լուծիւնը կը խզուի յանկարծ դրան բախիւնով : Տասնեակ մը գարուններ ողջունած տղեկ մըն է ներս մտնողը՝

կարմիր այտերով ու թիր աչքերով : Գլխարկին ձեւը կը մատնէ արդէն թէ «սկաուտ» մըն է ան, ծածկուած լայն վերարկուի մը տակ :

- C'est pour la jeunesse, Madame! կը ձայնէ իսկոյն քաղաքավար, ինձ երկարելով նամակի պահարան մը :

Հինգ հատ փոստ-քարդեր կան մէջը, PRO JUVENTUTE վերտառութեամբ, իրարմէ սիրուն ու խատուտիկ, ամէնքը միասին մէկ ֆըրանք միայն :

Կարելի՞ էր մերժել : Դուրսը բուք-բորան է : Այս տղան, չնայելով ձմեռուան արհաւիրքներուն, Պարտականութեանը ձայնէն ոգի առած, ձիւնի դէզերուն մէջէն հեւիհեւ անցեր եկեր է մինչև այս բարձունքը, ափ աննելու համար դարմանատան մը խցիկներուն դուռները, ի նպաստ մատաղ սերունդին :

Ան հազիւ թէ մեկնած է, երբ ես, բոլորովին չլուսաբանուած քարդերուն վաճառման նպատակին մասին, կը թարթափիմ անոնց գունագեղութեան ու նիւթերուն պէսպիսութեանը մէջ, մոռնալով դուրսը՝ որուն անաւոր սպիտակութիւնը կ'երթար պատուել վերստին այդ պզտիկ ուղեւորը, այնքան բարի և անվեհեր :

Քանի մը ժամ վերջ կ'իջնենք ճաշարան : Իրիկուն է : Սուրհանդակը հասած է և նամակները բաշխուած : Հատ մըն ալ իմ պնակիս քով կը դրուի : Զաւկէս կու գայ ան, Նէօշաթէլէն . անորն է գիրը : Բայց թղթադրոշմը կը շփոթեցնէ զիս, մեզի ծանօթ զուիցերականը չէ, բոլորովին տարբեր բան մը, կնպոյտի ու կարմիրի շերտաւորում մը՝ մանիշակագոյն չրջափակով՝ որուն գազաթը մանրատառ դրոշմուած է «pro Juventute», իսկ պատուանդանը՝ Helvetia : Արեւելեան հով մը կայ վրան, պարսկական, ճարտնական չեմ գիտեր ինչ մը : Եւ անմիջապէս, անգիտակից մղումով մը, ցոյց կու տամ զայն քովս նստող հոլանտացի տիկնոջ՝ որ մէկ ակնարկով կը կրկնէ «պոյ-սկաուտ»ին խօսքը :

- C'est pour la jeunesse!

Յետոյ կը մեկնէ այդ խօսքին՝ ինձ համար թաքուն իմաստը, թէ ուսումնասենչ և ընտանեզուրկ տղոց յատկացուելու համար, տարին անգամ մը, այսպէս, ընդհանուր երկրին մէջ հանգանակութիւն կը կատարուէր՝ ծաղիկներու և պատկերազարդ քարդերու վաճառմամբ, և թէ կառավարութիւնն ալ քանի մը շաբաթ իր postere կը տրամադրէր, որպէս զի - նոյն բախտագուրկ մատաղ սերունդին համար - յատկապէս պատրաստուած նամակադրոշմներ չրջա-

բերութեան դրուէին՝ պաշտօնականներուն առնթեր, սովորական արժէքէն փոքր ինչ բարձր, գնումը թէև կամայական:

Ասոնք խելէ վերջ ինչպէս չխորհի մեր որբերը քամբախտ, ուսմունքէն առաջ՝ աւուր հացի կարօտ, հագուստէ կապուստէ զուրկ, շատերը՝ տակաւին մահազին գերութեան մը ճապուռին մէջ, և ինչպէս երանի չկարգալ Զուրիցերիոյ նոր սերունդին այս որբացեալ և աղքատ դասակարգին՝ որ զինքն ա՛յնքան շատ և անհրաւէր հոգացողներ ունէր, ցորչափ ծնած էր երկրի մը մէջ ուր ազատութիւն կը հնչէր լիաթոք, այն վիթխարի ու փառապանծ լեռներուն ստորոտը, որոնք դրախտագեղ Հելվետիան կը յատկանշեն: Մինչ մեր դեռատի սերունդը, մանաւանդ լեգէոնները սա անհայր ու անմայր տղոց, որոնք զարհուրանքի մրրիկներէ այսահար՝ իրենց անտոյգ որբութիւնը կը շարունակեն ապրիլ:

Գթա՛, ո՛վ Տէր, խնայէ՛ անոնց անողոք փրճացումը, և փրկէ՛ այլևս մեր Ազգը հալածանքէ և որբութենէ: Դառնութեան բաժակը պարպողներուն մի՛ կերցներ մրուրն ալ միասին, և տճւր անսահման շորհչից փշուր մը:

Դէպ ի Երիտասարդութիւն, դէպ ի Հա՛յ երիտասարդութիւն:

ԼէօՅԻՆ (Զուրիցերիա) Ա. ԹԵՂԻՆԻ

Սիրով կը հրատարակենք հետագայ գեղեցիկ գրութիւնը, պարզ ոճով մը գրուած որ՝ մեր խնդրանքին վերայ մեզ դրկած է «Հայ Պատանի» շաբաթաթերթին Աթոնաստէր խմբագիրը՝ մեր ամէնուն ծանօթ յարգելի Տօքթ. Յ. Ու Մէքալըմ:

ԹԷ ԻՆՉՈՒ ԵՍ ՀԱԻԱՏՔ ՈՒՆԻՄ ՊՅՅ-ՍԿԱՍԻՏՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Շատ ուրախ եմ որ պոյ - սկաուտներու շարժումը հետզհետէ կը զօրանայ այս երկրին մէջ: Անկասկած մեծ փոփոխութիւն առաջ պիտի բերէ մանչերու կեանքին մէջ: Երբ մեծնան ու չափահաս մարդիկ ըլլան անոնք, զիրար աւելի լաւ պիտի ճանչնան որ աւելի զօրաւոր ու իմաստուն պիտի ըլլան քան ներկայ սերունդը:

Տեսական ամէն յառաջդիմութիւն նկարագրի արդիւնք է: Ես հաւատք ունիմ պոյ - սկաուտներուն շարժման վրայ, վասն զի անոր մեծ

նպատակն է, ուղիղ և ամուր նկարագիր կազմել: Ասիկա յայտնի պիտի ըլլայ արագ ակնարկ մը նետելով սկաուտներու տասներկու օրէնքներուն^(*) վրայ, որոնք որչափ կրկնուին, կ'արժեն:

Առաջինը սա է թէ՛ սկաուտին պատիւը վստահելի ըլլալու է: Շատ անհաւատարմութեան գործի, քաղաքականութեան, ընկերութեան և կեանքի ուրիշ ասպարէզներու մէջ, Բազմաթիւ անձեր կը խորհին կարծես թէ ամօթ չէ գողնալ, եթէ գողութիւնը չիմացուի: Սկաուտը միշտ պարտաճանաչ ու պարկեշտ ըլլալու է փոքր թէ մեծ բաներու մէջ:

Երկրորդն է Հաւատարմութեան օրէնքը: Սկաուտը հաւատարիմ է իր պետերուն և ընկերներուն, նաև սկաուտներու ամբողջ կազմակերպութեան: Կ'զգայ թէ ինք մեծ ընտանիքի մը անդամ է և կը պարծի անով: Կ'զգայ թէ անձամբ պատասխանատու է այդ մեծ ընտանիքին բարօրութեան համար: Կ'զգայ թէ անհաւատարմութիւնն անպատուութիւն պիտի բերէ իրեն և, ինչ որ աւելի ծանր է, պիտի արատաւորէ սկաուտներու անունը:

Երրորդ օրէնքն է ծառայութիւն: Սկաուտը վարժուած է նայիլ, փնտռել օգնութեան կարօտ մարդիկ, մեծ ու փոքր, և անոնց օգնել: Օր մը իսկ պիտի չ'անցնի առանց գոնէ օգտակար արարքի մը: Լաւ սորված է սա զասը թէ ճշմարտապէս մեծ մարդը այն չէ որ ուրիշներ կը ծառայեցնէ իրեն, այլ մանաւանդ այն որ ուրիշներու կը ծառայէ:

Չորրորդն է բարեկամութիւն: Սկաուտը վարժուելու է իր ընկերներուն ճշմարիտ բարեկամն ըլլալ: Բայց այս բաւական չէ: Պարտի ամէն մարդու բարեկամն ըլլալ, ազնիւ արարքներով յայտնուող տիեզերական բարեկամութիւն մը ցոյց տալ: Պէտք է որ զանազանէ սուտ ու ճշմարիտ բարեկամութիւնը, ինք բարեկամն է այն ամէնուն որոնց կրնայ օգնել, հոգ չէ թէ անոնք ինչ դիրք ունին կեանքի մէջ:

Հինգերորդն է Քաղաքավարութիւն: Աջաուտը պարտաւոր է քաղաքավար ըլլալ ամէնուն, մանաւանդ աղջիկներու, կիներու և ծերերու հանդէպ: Ասոր հիմն է Քրիստոսի ոսկեղէն կանոնը, «Ուրիշներու այնպէս ըրէք ինչպէս կ'ուզէք որ անոնք ձեզի ընեն»:

Վեցերորդն է Բարութիւն: Սկաուտը բա-

^(*) Սոյն տասներկու օրէնքները (զաւանանք) Անգլիական պոյ սկաուտին են, հայկականին մէջ մի քանի փոփոխութիւններ եղած են:



«Բարի լոյս» Սկաուտը զուարթ է . . .

րի է անասուններուն, գրաստներուն, թռչուններուն ու ձուկերուն հանդէպ: Բարի է անոնց անգամ որ բարի չեն իրեն:

Սօթներորդն է Հնազանդութիւն: Հնազանդութիւնը ըլլալու է արագ ու սիրալիր: Այս բանը դիւրին չէ միշտ, բայց առանց ասոր կը քայքայի ամբողջ շարժումը: Սակայն հնազանդութիւնը աւելի դիւրին կը սորվուի ուրիշներու հետ քան առանձինն, և շուտով կեանքի ունակութիւն կը դառնայ:


Ութերորդն է զուարթութիւն: Սկաուտը կը սորվի սիրով համբերիլ նեղութեան կամ անհանգստութեան: Կ'երգէ դժուարութիւններու մէջ իսկ: Կը յոգնի թերեւս, կ'հիւանդանայ ու կը տառապի թերեւս, բայց չը դժգոհիր ու չը տխրիր, այլ աւելի կը ժպտի երբ ամէն ինչ ձախող կ'երթայ:

Իններորդն է Խնայասիրութիւն: Սկաուտը խնայել կը սորվի: Կը վարժուի շոռայութենէ խոյս տալ, անկախ ոգի սնուցանել և իրեն համար բաներ ընել: Այսօրուան ամենամեծ շարիքներէն մին է այն անհոգութիւնը որով մարդիկ իրենց ժամանակն ու դրամը կը վատնեն: Խրնայագէտ ազգը զօրեղ ազգ կ'ըլլայ:

Տասներորդն է Քաջասրտութիւն: Սկաուտը կը սորվի ճշմարիտ հետոս ըլլալ, վտանգին առջև աներկիւղ և ուղիղին պաշտպան կանգնող, հակառակ բարեկամներու փայփայանքին կամ թշնամիներու ծաղրանքին ու սպառնալիքներուն: Երբեք չվհատիր թէ իսկ պարտուի, այլ արիարար կը շարունակէ գործել:

Տասնմէկերորդն է Մաքրութիւն: Սկաուտը կը ջանայ մաքուր ըլլալ մարմնով, մտքով, լեզուով, սրտով: Դիտէ թէ միայն այդ կերպով կրնայ զօրաւոր ըլլալ:

Տասներկուերորդն է Ակնածանք: Ակնածիլ




«Բերա-Շիշի»ի Սկաուտները
Սկաուտը զուարթ է . . .

կը նշանակէ զԱստուած հաշուի առնել ամէն բանի մէջ: Ազնիւ մարդոց փառքն ու պսակն է այս:


Երբ այդ գեղեցիկ օրէնքներուն կը նայիմ, շատ կը ցաւիմ որ իմ տղայութեանս ժամանակ պոյ-սկաուտներ չկային: Սակայն միեւնոյն ժամանակ կ'ուրախանամ որ այսօր հազարաւոր մանչեր իրենց կեանքերն այս օրէնքներով կը կառավարեն: Երանի թէ անոնց թիւը այնչափ մեծնայ որ աշխարհի մէջ գտնուող ամէն մանչ «պոյ սկաուտ» եղած ըլլայ:

Յ. ՈՒ. ՄԷՔԱՆԸՏ



Երիտասարդ քրիստոնէից ընկերութեան քերայի սրահին մէջ միջազգային սկաուտական դասախօսութիւն մը սարքուած է Աեգլերէն լեզուով: Դասախօսն է Ամերիկացի Պրն. Էտուըրտ Ռէտքլիֆ, համակերելի երիտասարդ մը որ ներկայիս Ռօպերթ քօլէճի սկաուտ խմբապետն է: Դասախօսութիւնները տեղի կուենան ամէն չորեքշաբթի երեկոյ ժամը 7-9, սկսեալ 20 ապրիլի 921 չորեքշաբթիէն: Մասնակցողներու վճարումն է 3 սսկի ամբողջ դասախօսութեան ընթացքին: Դիմող երիտասարդները պիտի կազմեն խմբակներ՝ խմբապետութեամբ Պրն. Ռէտքլիֆի

FIG. 4. U. S. G. P. J. 1911. 4075. 0700. 0000. 0000. 0000. 0000. 0000.





Կարկաթայի Հայ Քօլէճին սկաուտական, նուաչախումբը

ւոր կողմերը, Արեւել, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ: Յետոյ ասոնց միջև կան չորս երկրորդական կողմեր, հիւսիսային Արեւել, հարաւային Արեւել, հարաւային Արեւմուտք եւ հիւսիսային Արեւմուտք: Կան նաև ութ երկրորդական կողմեր, որոնք են, հիւս. հիւս Արեւել, Արևւ. հիւս. Արեւելք, Արևւ. հրաւ. Արեւելք, հարաւային հրաւ. Արեւելք, հարաւային հրաւ. Արեւմուտք, Արեւմ. հրաւ. Արեւմուտք, Արեւմ. հիւս. Արեւմուտք, հիւս. հիւս Արեւմուտք: (պատկ 6):

Կողմնացոյցի խաղը, Դասախօսը տեղ մը անշարժ կը կենայ և ինք հիւսիսը կը ներկայացնէ, մնացեալ 15 կողմերէն միոյն անունը կուտայ տղոցմէ մէկուն՝ ան պարտաւոր է ասանց շուտ բերու ան իջապէս տեղը որոշել և երթալ հոն կենայ: Սոյն խաղը քանիցս կրկնել պէտք է:

Ք. Ժ. ՊՏՈՒՆԻ

ձիզմէճեան, Արշակ Յակոբեան, Պօղոս Շապոյեան, Արարատ Քրիսեան, Յովհ. Ֆրէնկեան:

Քննութիւնները բաւական յաջող անցան:

Ընդհանուր դիտորութիւններ լննիլ յանձնախումբին.

1. Զանազան աւերորդ նշաններու, պէքերու աստղերու և եռագոյն ժապաւէններու գործածութիւնը, որոնք սկաուտական տարազի մաս չեն կազմեր պէտք է դադարի:

2. Զանազան խուճերու մէջ գաւազաններու սեփականութիւնը չէ ճշտուած, ամէն սկաուտ իր անուան սկզբնատառերով և մասնաճիւղի խուճի և խմբակի թուով գաւազանը պիտի ունենայ:

3. Խմբակները, փոխ-խմբակները և առաջնորդները, յաճախ իրենց պաշտօնին գլուխէն հեռանալուն տեղը թերացումին մէջ գտնուեցան ինչ որ կարգապահութեան խոշոր թերացում մը կարելի է նկատել:

4. Պայտասակներու օժանդակ կաշիներու գործածութիւնը ընդհանրապէս զանց աննուած էր:

5. Տողանցքի առթիւ քայլերու անբնական զարնուածքը տեղը երեւոյթ մը յառաջ կը բերէր:

6. Վզկապերու ծայրերուն գնդաւորի կամ ճարձանդի միջոցաւ հանգրիճումը երբէք թոյլատրելի չէ, ինչպէս նաև օճիկներու նուազի ձեւով բացուիլը:

29 Ապրիլ 921 ի դիմաց Սկաուտական Յանձնախումբի Ասեմադպիր Բ. Ասեմապետ Ա. ՅԱԿՈՐԵԱՆ ԼԱՅԿ ՃԻՉՄԷՃԵԱՆ

Մասնակցող մասնաճիւղերու մասին զատ զատ եզած դիտողութիւնները բոլոր մասնաճիւղերուն զրկուած է 29 Ապրիլ թուակիր տեղեկագրով: (Ծ. Գարտ.)



ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլ 17 ին տեղի ունեցան սկաուտական ընդհանուր քննութիւններ:

Ասիական կողմի սկաուտները Սկիւտարի մարզաբանին մէջ իսկ Եւրոպականները Բերա Նիշիի մարզաբանը:

Մասնակցեցան, Սկիւտար, Բերա-Նիշի, Գատըզիւղ, Գումգաբու, Պէշիկթաշ, Սամաթիա, Նոր դպրոց, Թօփդաբու, Գուլէի (Կեդր. որբանոց) Մասնաճիւղերը: մնացած մասնաճիւղերը կարենալով հասնիլ նոյն օրուան ուրիշ անգամի յետաձգուեցան անոնց քննութիւնները:

Պաշտօնական քննիչներն էին Պ. Պ. Յովհաննէս Հինդլիսան Գրիգոր Յակոբեան Արտաշէս Ալլահվերտի, Հայկ


ՆԱՄՕՆՆԵՐ

Իգմիր 20 Ապրիլ 1921

... Սկաուտական կեդրոնի վարչութիւնը վերընտրուածն սկսած է եռանդուն աշխատանքի:

Իր նոր վարչութեան Անդամներն են.

Պ. Պ. Տիրակ Աշլեան (Ատենապետ) Յ. Հարոնեան (Փոխ Ատենապետ) Բարունակ Այնզեան (Գանձապետ) Վահան Պայրպանեան (Ատենադպիր) Դանիէլ Դանիէլեան, Լևոն Գպրըզեան, Յովհ. Մաթիկեան (Խորհրդականներ) Arthur Newman (Պատուակալ Ընդհ. Պետ) Մկրտիչ Եանըզեան (Ընդհ. Պետ) այս առթիւ իր անկեղծ մաղթանքները կը զրկէ Ձեր Հ. Մ. Բ. Մ. ի կեդրոնի վարչութեան և այն հաստատ հաւատքը կը տածէ թէ՛ դուք և մենք որ մէկ



ԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ

ձագար ազրար, մինչև երեք համբոմ,
դուրս ելիր: Մ'ն մէկ, երկու, ե'... րեք...

Իմ պզտիկ մկնիկ ջնս ուզեր քիչ մը հանգիստ կենայ...
անձ այսպէ՛ս...

Խոտալի եռու, տղներ ենք, յետ այսու աւելի սեղմ գործակցութիւն մը պիտի ունենանք և պիտի կարողանանք օժանդակել փոխադարձաբար 'ի նպաստ հայ պատահաներու յառաջդիմութեան...

յարաբերութիւնը կը պահէ կալիաթայի հայ սկառտական շարժումին հետ: Վերջերս մեզ զրկած է կալիաթայի հայկական քօլեճին Անգլիերէն տեղեկագիրը, որմէ կը զաղկնք հետեւեալ տողերը և նկարները: Ծ. Խ.

Մնա՛ք Ձերդ Անկեղծօրէն
Ասեմապիտ Ն. Պ. Ս. Մ. Կեդր. Վարչութեան
Տ. ԱճՆԱՆ

Ազեմապիտի 8 Մարտի 1921

Նոր Վարչութեան ընտրութիւնն առիթն Սկառտներու խմբագրութեան Պ. Յ. Գլըճեան անձնական զբաղումներու պատճառաւ քաշուած ըլլալով, վարչութիւնը անոր տեղ ընտրեց նախկին խմբագրութեան Պ. Գ. Զօպանեանը որ անմիջապէս պաշտօնի դալով խուճիկն թիւը բարձրացուց 120ի: Խուճիկը բաժնեց խմբակներու: Անգլ. Սկառտներու խմբագրութիւնը կողմէ իմաց տրուած Սկառտի ճիւղի հիմնադիր Զօրավար Պէրսին Բաւրլիի Ազբի ամսոյն սկիզբները Քաղաքս այցելելու լուրը ամէնքս ուրախացուց: Այս առթիւ անցեալ շաբաթ «Վարձ»-ի մէջ համազգային ժողով մը տեղի ունեցաւ՝ բազմապիսեան տեղաւայր բոլոր ազգերու Սկառտներու խմբագրութեան, նիւթ ունենալով Մեծ հիւրին ընդունելութեան եղանակը և զանազան խաղերը: Ի սրտէ կը մաղթեմ որ Պոլսոյ Սկառտներն ալ առիթը ունենան ընդունելու սիրելի Սկառտս պետը:

Կը յուսամ յաջորդով պիտի կրնամ Զօր. Պէրսինը Բաւրլի այցելութիւնը նկարագրել:

Ս. ՍԻՐԱՔԵԱՆ
Սկառտ Առաջնորդ

**ՍԿԱՐՏԱՆԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿԱԼԿԱԹՅՈՒՆԻ ՄԵԶ**

Պ. Օննիկ Գօլմանեան բարութիւնը ունեցաւ մեզի տրամադրելու կալիաթայի սկառտական թերթերէն օրինակներ, ինք նախապէս Հնդկաստան և Անգլիա սկառտական շարքերու մէջ գտնուած ըլլալով ներկայիս ևս իր

... Մեր տղաքը իրենց ազգին արժանի զաւակներն են: Ինչ բաներ ընելու որ հրաւիրուած են, կատարած են մեծ ջանքերով և յաջողութեամբ Քրիկէթի, Ֆուտբոլի, Հօքէյի մրցումներու մէջ արժանացած են մրցանակներու: Իբրև կրտսերներու միութիւն, Սրբ. Զարչու կլիբի նշանին արժանացած են իրր կալիաթայի մէջ գտնուողներուն լաւագոյնը: Իբր Սկառտներ, «Թագաւորի դրօշ»-ին արժանացած են, և գլխաւոր ներկայացուցիչ օգնական Քերթրն Բաքէն՝ ուր Ուօլը, վերջերս հրապարակաւ յայտարարած է թէ հայ վարժարանի Սկառտական միութիւնը, Արեւելեան Ասիոյ լաւագոյններէն է...

**ԲԱՐԻ ԵՎՍՓ ՏԱՄՔ
ՀԱԶԱՐ ԲԱՐԻ
ՏԱՌԱՊԱՆԻՔԻ ՓՇՈՏ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ
ԱՆՆՈՆՋ ԿԱՐՈՒԱՆ**

Հ. Մ. Ը. Մ. 20րդ Մասնաճիւղ՝ Արմաւի Գիւղասնեսական Վարժարանի» սկառտները, իրենց բոլոր ուսուցիչներով Պոլիս հասան, իրենցմէ 7 հոգի պաշտօնով կը մնան Քարափիլիսա, Ամերիկացիներու մօտ, որոնք մօտ աշենեկ կը հասնին հոս:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՉԵԿՈՅՑ

Հ. Մ. Բ. Մ. ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒՆ



(Սկսուածական Յանձնարար մրէք)

8 Ապրիլ 921 շրջաբերական թիւ 51

Հայ սկսուածի Ա. տարի 23-24 թիւի մէջ եղած Նը-րահանգին գործադրութեան առիթով տեսնուած հարկին համաձայն. Նտագայ փոփոխութիւնները մտնելու յարմար դատուած է:

Ա. — Աւանդի եւ խումբի դիւրակին վրայ գտնուող Ռո-մէն թուանշանը (մասնաճիւղը որոշող) պարզ թուանշանի եւ փոխադարձաբար խումբը որոշող պարզ թուանշանը Ռոմէն թուանշանի փոխելու (Պատկերը յաջորդ-թիւով Մ. Խ.)

Բ. — Խումբի դրօշակին ծաւալը փոխանակ 30x50 ըլ-լալու՝ պիտի ըլլայ 40x60. որմէ դուրս ձողին անցնելու համար կանակին կողմէն ձեւում կտուէ եւ դրօշին ձողին լայնքով խողովակ մը պէտք է ըլլայ: Դրօշին ձողը պիտի ունենայ 180 սանթմր. երկայնութիւն եւ շուրջ 3 սանթմր. տրամագիծ: Դազաթէն երկու եւ անկէ 45 սանթմր. վար երկու փոսոցայի ողակներ շինել: (պատկերը յաջորդ թիւով):

Գ. — Ապրիլ 17էն վերջը որեւէ սկսուած որ չէ անցուցած սոյն թուականի նորընծայի քննութիւնը եւ չէ մասնակցած վերոհշեալ ընդհ. քննութեան չպիտի կըր-նայ կրել սկսուածական փողկապ, գօտիի եւ գլխարկի նշանակը:

Դ. — Երկրորդ կարգի սկսուած քննութիւնը անց-նողները միայն պիտի կրնան սկսուածական երդում կա-սարել:

Ե. — Մինչեւ 150 սանթիմէթը հասակ ունեցող սկա-ուաններուն 140 սանթիմէթը՝ իսկ անկէ վեր հասակ ու-նեցողներուն գաւազանը 160 սանթիմէթը պիտի ըլլայ:

ԿԵՒՐՈՒՆԻ ՎԱՐՉՈՒԹԵՆԷՆ

10 Մայիս 921 թիւ 55 շրջր.

* * * Մասնաճիւղերու մէջ ի նպատակ Միութեանս տեղի ունենալիք հաղէտներն ու ներկայացումները պէտք է Միութեանս ռգիին յարմար ըլլան, այս կէտը Մասնաճիւղերու վարչութեանց ուշադրութեան կը յանձնենք:

Տասնը ութը տարեկանէն վար եղող, խմբայեա փոխ-խմբապետ, առաջնորդ եւ սկսուածները չեն կրնար ո եւ է կուսակցութեան պատկանիլ:

Այս մասին գրուած է բոլոր կուսակցութիւններու կեդրոններուն եւ պատասխաններ ստացանք որոնք պի-տի հրատարակենք յաջորդով (Ս. Բարտ):

ՊԶՏԻԿ ՆՈՐԸՆԾԱՅԻ ՄԸ ՔԵՆՈՒԹԻՒՆ

Պ. — Եթէ ընկերներէդ մին բարկացած ըլլայ եւ աչ-քերէն ու երեսէն կրակ ցայտէ, ինչ միջոց ձեռք կ'առ-նես իրեն համար:

Պ. — Հէ՛... Զրահանկիրներուն իմաց կուտամ:

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

Կ Ի Ն Ե Ր Ո Ւ Յ Ա Տ Ո Ւ Կ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՄՕՆԹԷ ԳԱՐՆՈՅԻ ՄԷՋ

Մօնթէ Գարնայի մէջ տեղի ունեցած իգական սեռի Ֆիզիքական կրթութեան և սքօրի առաջին միջազգային հանդիպումը, մարմամարզիկ կնոջ համար իրական յաղ-թանակ մը եղաւ:

Անգլիայէն, Զուիցերիայէն, Իտալիայէն և Ֆրանսա-յէն եկող երեք հարիւր դեռուտի աղջիկներ, շարաթ մը տեւող սոյն ողիմպիական խաղերուն մասնակցեցան: Սքօրի տեսակետով ձեռք բերուած արդիւնքները հրա-շալի էին եւ այս խաղերը այնքան կանոնաւոր եղան որ դժուարահաճները և այս շարժումին ծուռ աչքով նա-յողներն իսկ համոզուեցան որ կինը կամ ու է մարդկա-յին էակ պէտք չէ զրկուի Ֆիզիքական բարիքներէ:

Յառաջիկայ տարի կիներու Միջազգային Ողիմպիա-կանը կրկին տեղի պիտի ունենայ Մօնթէ Գարնայի մէջ և երկու կամ երեք շարաթ պիտի տեւէ:

Այս տարուան խաղերը ի մէջ այլոց կը պարունակեն ոստումներ, վազեր, պասէք պօլ, Շուքսական մարզանք, մարզական պար եւ... ներկայացում:


Յունաստանի մէջ, Ողիմպոսի լեռան վրայ կատար-ուած հին ողիմպիական խաղերուն յայտագրին մէջ եւս ըբշմամարտութիւնէն վերջ կուգար... բանաստեղծու-թիւնը. վազէն վերջ նուազը. սկաւառակէն վերջ... ողբերգութիւնը, կիները այրերէ աւելի պտտագէտներ կամ պահպանողականներ! ըլլալու են որ բանաստեղծու-թիւնը եւ ողբերգութիւնը իրենց Ողիմպիականներէն ներս ընդունած են: Մենք ալ եթէ ընդունինք գէշ չըլլար մեր ժողովուրդը դժբախտաբար ողբերգութիւնէն, մանաւանդ բանաստեղծութիւնէն աւելի կ'ախորժի, քան թէ մանկագութիւններէն, ինչպէս ուսանք կը սիրեն կո-չել մարմամարզը իրենց յատուկ ըմբռնումով... Անցնինք:

Սքօրի մէջ անգլիացի և ֆրանսացի կիները յաղթա-նակները իրենց միջև բաժնեցին:

Միս Լայնս, յաղթական անգլուհին, որ 60 եւ 250 մէթր վ դճերուն և ցանկարշաւին մէջ առաջին ելաւ, քա-նըծօթը տարեկան, ներդաշնակ մարմնով սքօրը մըն է: Անոր չափանիշերը զարմանալի էին, և ֆրանսացի այր մասնագէտներն իսկ կը գերազանցէին...

Ստորև կուտանք մէկ քանի կարեւոր մրցումներու արդիւնքները. —

- 60 մէթր վազք. — Ա. Միս Լայնս (Անգլիա) 8' 1/5
- 250 մէթր վազք. — Ա. Միս Լայնս (Անգլիա) 36' 3/5
- 800 մէթր վազք. — Ա. Օր. Պէտր (Ֆրանսա) 2' 30" 1/5
- 7 1/2 մէթր ցանկարշաւ. — Ա. Օր. Տըլաբիէր (Ֆրանսա) 12" 3/6
- 300 մէթր խմբարշաւ. — Ա. Անգլիա 49" 3/5
- 800 մէթր խմբարշաւ. — Ա. Անգլիա 1' 46"



Օ՝. ԼՈՅՆՍ

4 70 մէթր երկայնութիւն կը ցատկէ:

Երկայնութեան ցատկիչ. — Միս Լայնս (Անգլիա) 4,70 մէթր: Ուժ առած քարճուրիւն. — Օր. Գուզէլ (Ֆրանսա) և Միս Նաթ (Անգլիա) հաւասարապէս 1.40 մէթր:

Նիզակ նետիչ. — Ա. Տիկին Կուրօ Մօրիս, 41.53 մէթր: Երկար նետիչ. — Ա. Տիկին Կուրօ Մօրիս, 16.29 մէթր: Գասքէթ Պօլ. — Անգլիա

Մեր սոյս արդիւնքները քաղած թերթը դժբախտաբար չըսեր թէ նիզակը և երկաթը սովորական ծանրութիւնը ունէին թէ ոչ, եթէ այո՛, ինչ որ տարակուսելի է, Տիկին Կուրօ Մօրիսի մարտի ներքև անայսման այր մը պահուած է: Եթէ կիներու մէջ այդքան զօրաւորներ իրապէս գոյութիւն ունին, աշխարհիս օրէնքները հի մակուռնէ շրջուած կրնանք նկատել... Այսքան ոյժ կը նոջ համար, մենք անօգուտ կը նկատենք, որովհետև ամէն բանի չափազանցութիւնը վնասակար է և այս պարագային կրնայ իր վնասակար ազդեցութիւնը ունենալ ընտանիքի կազմութեան խիստ կենսական խնդրին մէջ: Իրաւ է թէ զօրաւոր մայր մը առողջ գառնուկի մը ծնունդ կուտայ, սակայն այդ ոյժը մարմին մէջ պէտք չէ փնտռել, այլ նաև նկարագրին և յետոյ մարմնական համաչափութեան մէջ:

Թող կիները փառասիրութեան ցանկացողներ չըլլան, Մեր մասններուն թելադրանքով, այրերս՝ քար քարի վրայ չթողուցինք... մասններուն տեղ մաքուր սըրտին մէջ անոնք ալ թող իրենց միտքը զօրացնեն և պայծառացնեն:

ԼՈՆՏՈՆԻ ԵՒ ԲԱՐՍԷԼԻ ՄԻՋԵՒԻ ԲՐԿՊԻՒ ՄՐՅՈՒՄ. — 17 Ապրիլ. Կիրակի օրը, Ֆրանսայի մէջ տեղի ունեցաւ Լոնտոնը և Բարսելոնայի միջև խաղը: Բրկպի մրցումը, 6 կէտի դէմ 16 կէտով Բարսելոնայի թակաւ ելաւ:

ԲԱՐՍԷԼԻ ԵՒ ՊՐԻԻՒՄՍԷԼԻ ՄԻՋԵՒԻ ՅՈՒՏ ՊՈԼԻՄԵՐՍՈՒՄ. — Ապրիլ 17ին, Կիրակի օրը, Ֆրանսայի մէջ տեղի ունեցաւ Բարսելոնա և Պրիւքսէլը ներկայացնող Ֆուտ-



Օ՝. ՔՈՆՈԼ

Կը շահի 60 մէթր վազոր

պօլի խաղերուն միջև մրցում մը, երկու կողմերը 2 կօլով հաւասար մնացին: Հակառակ աննպաստ օդին, հանդիսականներուն թիւը 6000ը կ'անցնէր, որոնց միջև կը գտնուէին երեսփոխաններ, պետական պաշտօնեաներ, Մարմն. միութիւններու և մասուլի ներկայացուցիչներ և այլն:

ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՍԿՈՎՏԻՈՅ ՄԻՋԵՒԻ ՅՈՒՏ ՊՈԼԻՄԵՐՍՈՒՄ. — Ապրիլ 9ի շաբաթ օրը, Կլասկոյի (Սկոտլանդ) Հէմաթըն Բարգի մէջ տեղի ունեցաւ բարձր անգլիացիներու հետ մրցութեան առարկայ դարձած Անգլիայ և Սկոտլանդ միջև Ֆուտ. պօլի տարեկան մրցումը:

Հէմաթըն Բարգ, աշխարհիս ամենամեծ խաղադաշտն է. այսուհանդերձ չէ կրցած պարփակել բոլոր հանդիսատեսները: Անգլիական թերթերը կ'ըսեն թէ, եթէ յիշեալ մրցումայրը 120,000ի տեղ 250,000 հանդիսատեսներ կարելի ըլլար ընդունել, լիկ լեցուն պիտի ըլլար, նոյնիսկ 500,000 հոգիի տեղ ըլլար, նորէն ասեղ ձգելու տեղ չպիտի մնար: Հասոյթը մտաւորապէս 10,000 անգլիական սոկի եղած է: Սկոտլանդ գէորի դէմ 3 կօլով յաղթած է Անգլիայ: Կլասկոյի մէջ ուրախութիւնը այնքան մեծ էր որ, երեկոյեան մասնաւոր յաւելումներ հրատարակուեցան, որոնց մէջ մրցումը կը նկարագրուէր կատարեալ մանրամասնութեամբ: «Իվինկ Նիոն» թերթը իր վեց խոշոր էջերը գրեթէ ամբողջութեամբ նուիրած է այս մրցման նկարագրութեան:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐՆ ԱՆ ԲՐԿՊԻՒ ԽՈՒՄԻ ԿԸ ԿԱԶՄԵՆ. — Բարսելոնայի Կեդր. ստիկանատունը Բրկպի երկու խաղեր կազմեց, մէկը համազգեստաւոր ստիկաններէ, իսկ միւսը դաղանի ստիկաններէ բաղկացեալ: Բրկպի խաղացողներու դպրոց մըն ալ պիտի հաստատեն: Ասկէ վերջ, ուրեմն, Բրկպին պիտի խաղացուի ոչ միայն Բարսելոնայի մարզադաշտերուն մէջ, այլ նաև փողոցներն ալ, և օրէնքին պտուցող պատգամին չընկատակող անիշխանական թափառաշրջիկ մը Օի դէմ 1 կէտով ծակը պիտի նետուի Բրկպիիս ստիկանին կողմէ!:

ՎԻԷՆԱՅԻ ՄԷՋ ՎՍԿԱՅ ՄԱՐԶԱԴԱՇԻ ՄԸ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ. — Վիեննա անօթի է, Վիեննա տնտեսական ծանր տագնապի մը մտնուած է. ինչ փոթ, Հոն ալ սրտի դարգացման վրայ կը խորհին և ամէն բան մէկդի թողով ոգի ի բռին կ'աշխատին կառուցանել մարզադաշտ մը, ուր պիտի կարենայ մինչև 100,000 հանդիսատեսներ պարունակել: Շինուածքը խիստ մաքուր է. մայիս ամսուն մէջ աւարտած պէտք է ըլլայ:

ՖՈՒՏՊՈՒԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

«ԿԱԼԱՔԱ ՍԵՐԱՅ»

Թուրք ֆուտպոլի ընկերակցութեան Կուրնոյի մրցումներ:

Պատյ ամենէն հին սովորներէն մին եղող թրքական «կալաթա Սերայ» խումբը, իր տարեգարմին առթիւ Գատը գիւղի Իւնիօն գիւղի մարզադաշտին մէջ Ապրիլ 17, 22, 24ի օրերուն համար կազմակերպած էր ֆուտպոլի «թուրքուա» մը, որուն հրահրուած էր մասնակցի նաեւ Հ. Մ. Բ. Մ.:

Կը մասնակցէին 9 խումբեր՝ որոնցմէ 7ը թուրք, Այսպէս 1 Հ. Մ. Բ. Մ. 2 Ֆեկեր Պաղէ, 3 Կայարս Արայ, 4. Պէրիքաշ, 5 Սրեկա, 6 Անասոյու, 7, Պէրիքպի, 8. Հիլայ, 9. Վեֆա:

17 Ապրիլ Ինիօն, Գիլի Պատրիկ

Ա. ՄՐՅՈՒՄ. Հ. Մ. Բ. Մ. խառն խումբ (ըստ վիճակի) — ՀԻՒԱԼ (Թուրք)

ԱՐԳԻՆԵՐ Թ — Թով

ԳիՏՈՂՈՒԹԻԻՆ. Կէս ժամ տեւող երկու «հաֆթայ»ներու ընթացքին, հայ խումբի տղարը հազիւ կրցան իրարու խաղաձեւին ծանօթանալ, այսպէս՝ գրեթէ խաղը ապարդիւն անցաւ: Սակայն յայտնի կ'երեւար թէ Հայերը վերջի վերջոյ պիտի յաղթէին:

22 Ապրիլ ուրբաթ. նոյն խաղավայրին մէջ:

Ա. ՄՐՅՈՒՄ. Հ. Մ. Բ. Մ. — խառն խումբ ՀԻՒԱԼ (Թուրք)

ԱՐԳԻՆԵՐ Հ. Մ. Բ. Մ. ՅԱՂ-ԹԱԿԱՆ 2 — Թով

ԳիՏՈՂՈՒԹԻԻՆ. Հայերը գոզելի երանդով մը եւ կարգապահութեամբ կը խաղային:

24 Ապրիլ կիրակի նոյն խաղավայրին մէջ:

Գ. ՄՐՅՈՒՄ. Հ. Մ. Բ. Մ. խառն խումբ —

ՖԵՆԵՐ ՊԱՂԱԶԻ (Շամրիօն Թուրք)

ԱՐԳԻՆԵՐ 1 — 1 ով:

ԳիՏՈՂՈՒԹԻԻՆ. Առաջին «հաֆթայ»ին Հայերը հովին դէմ ըլլալով աւելի պաշտպանողականի վրայ մը նային՝ սպասելով երկրորդ «հաֆթայ»ին՝ ուր կը յուսային իրենք ալ օգտուիլ հովին նպատակորութենէն: Թէեւ սխալ կարեւորութիւն չեն տար հովի, փոշիի և կամ անձրեւի, սակայն սյդ անկարեւոր կարծուած պատահարները շատ կ'ազդեն խաղի ճակատագրին:

Երկրորդ «հաֆթայ»ի վերջաւորութեան մօտ Հայերը յաջողեցան «հօլ» մը ընել: Ֆեկեր Պաղէ վախճալով որ իր տիտղոսը վրայ կ'ուտայ, բռուն յարձակողականի սկսելով յաջողեցաւ հօլ մըն ալ ինքը ընել, օգտուելով Հայ պիներուն սխալ մէկ ընթացքէն՝ որոնք պատճառ դարձած էին որ հօլ իրարը իր տեղէն ելլայ եւ հօլը բաց մնայ: Այսպէս խաղը վերջացաւ 1ի դէմ 1 հօլով: Այս արդիւնքը դարձեալ պատուաբեր է Հայոց համար, ո-

րովհետեւ Պայտ Շամրիօնին հետ հաւասար մնացին: Թէեւ ըստ օրինի պէտք էր որ խաղը շարունակուէր բայց ժամանակը ուշ ըլլալուն ուրիշ օրուան յետաձգուեցաւ:

Խումբին չորս մասերուն մեր խորհրդածութիւնները կարելի է բաժնել հետեւեալ կերպով:

Ա. ֆոտբոլ. ասոնք խումբին ամենէն տկար մասն էին, փոխանակ զօրաւոր ըլլալու: Գլխաւոր պակասը իրենցմէ մի քանիին տեղ չընելն ու քաս չտալն էր: Ինսայրները կեդրոնը եւ աջ բացն ալ (ձախ բացը իր տեղն էր) ինսայրին տեղը կեցած էին: Երկու բացերը պէտք է սկներգօնին հետ մէկ ուղղութեան վրայ Լօյի դիմերուն շատ մօտը կ'ենան, իսկ ինսայրներն ալ այդ երեքէն 4—5 մէթր ետեւ, այդպէսով քաս առնել տալը աւելի կ'անսխալ կըլլայ: Թուրք խումբին ֆոտբոլ որ ստեղծուած շատ լաւ կազմակերպուած էին, Հայ խումբին ֆոտբոլուն արագավազութիւնը միայն մասամբ մը դարձանեց իրենց սխալը:

Բ. Հաֆթայերը.— Ասոնք կօյիքրէն վերջ խումբին ամենէն զօրաւոր մասն էին, թուրք ճարտար ֆոտբոլն դիմաց՝ առանց յողներու լաւագոյն կերպով պաշտպանեցին. միայն քիչ մը աւելի քաս պէտք է տան ֆոտբոլն:

Գ Պէրիքը. լաւ էին եւ պիտի մը պէտք եղած զօրաւոր զարնուածքը ունէին, սակայն զնդակին ուղղութիւն տալու խնդրին շատ կարեւորութիւն չէին տար: Ինչ մը ուշադրութեամբ լաւ պիտի են:

Դ. Կօյիքրը. խումբին ամենէն զօրաւոր մասը: Պատյ լաւագոյն իրարը եղող պարոնը, անքննադատելի խաղացուածք մը շնորհաւորելի պաղարիւնութիւն մը ունի:

Երբակացներով՝ սա՛ միայն կրնանք ըսել որ այդ թիւն քիչ մը աւելի փորձ ընելու պէտք ունի, որովհետեւ ամենքն ալ իրարու խաղացուածքին անտեղեակ էին: Շարունակական փորձերով լաւագոյն ֆուտպոլի թիւ մը կրնայ ըլլալ:

Գլխով թուրք խումբին, անոնք շատ լաւ combinaison մը ունէին, որ արդիւնքն է անտարակոյս ամենօրեայ ամբողջական փորձերուն:

29 Մայիս կիրակի. (Ինիօն Գլիլայ)

Հ. Մ. Բ. Մ. խառն խումբ — ԿԱԼԱՔԱ ՍԵՐԱՅ (Թուրք)

ԱՐԳԻՆԵՐ ԿԱԼԱՔԱ ՍԵՐԱՅ ՅԱՂ-ԹԱԿԱՆ 2 — 1 ով:

ԳիՏՈՂՈՒԹԻԻՆ. Առաջին մասին վերջերը Հայերը իրենց «ֆօտ»երուն ճարտար բնուէրու յաջողեցան «հօլ» մը ընել: Երկրորդ մասին սկիզբները թուրքերն ալ «հօլ» մը ըրին. անմիջապէս վերջ տեղի ունեցող «գօնընը» մը «հօլ» մը եւս արժեք Հայերուն: Խաղին մնացեալ մասին մէջ զնտակը միշտ «կալաթա Սերայ»ի բերդին մօտերը կը մնար, սակայն (իրենց բարատակութեան թէ ուրիշ բանէ մը ըսենք) Հայոց բոլոր ձեգերը պարագային եւ խաղը վերջացաւ թուրքերուն ընդդէմ: Խանդավառութեան մէջ:

Կիրակի օրուան մրցումը ենթադրուածէն շատ տարբեր արդիւնք մը տուաւ: «կալաթա Սերայ»ի մեծամասնութիւնը կոշտ խաղացողներ ըլլալով մէկտեղ իրենց մէջ առած էին Մաճառ «շամրիօն» խումբէն երկու լաւագոյն խաղացող եր, որոնց նուրբ խաղացուածքը

բուրքովին տարբեր էր իրենց ընկերներէն: Արդարեւ ինչպէս գտաւորին— որ թուրք մըն էր — տեղեկագիրն!! ալ կը շեշտէ՛ թուրքերը շատ կոշտ խողացուածք մը ունեցան. օրինակի համար, շատ անգամներ Հայ յառաջապահները թուրք «Տափալէքներէն»... գերկընդխառն կ'ընդունուէին: Գաղափար մը տալու համար ըսենք թէ ամբողջ խաղի ընթացքին թուրքերը 16 «Ֆաուլ» իսկ Հայերը միայ 4 «ֆաուլ» ըրին:

Պարտութեան պատճառներէն մէկն ալ կրնանք նկատել Հայ խումբին տղոց իրենց այդ օրուան մրցակից խումբին կարեւորութիւն չտալը: Այդ ըմբռնուածով խաղացին՝ մինչեւ որ միւսները առաւելութիւնը ձեռք բերին: Անկէց վերջն էր որ Հայերը սկսան գերազայն ճիգ մը ընել, բան մը որ պէտք էր յաջորդէր իրենց առաջին «Տափալէք» ըրած կօյն:

Կիրակի օրուան խաղին, թէ՛ պիտերը եւ թէ՛ «Տափալէք»-երը թալ խաղացին, հակառակ անոր որ թշնամի յառաջապահները այդքան կարեւորութիւն չտալիք ու ժ մը չէին: Իսկ «Փոսլըթա»-ները զուրկ էին ունենալէ ան համերայն գործակցութիւնը (combinaison) որ շատ անհրաժեշտ է «Հայ խումբ» խումբ» անունը կրող իւր ժ մը համար: Կրկին ու կրկին պէտք կ'ըզանք շեշտել թէ՛ իրարու խաղացուածքին անձնաթանձերը քով քովի ընտրելով յաջող արդիւնք մը սպասել կարելի չէ. պէտք է շարունակական փորձեր ընել եւ միշտ նոյն խաղացողներով, որովհետեւ դիտեցինք որ իւրաքանչիւր խաղի կամ խաղացողները եւ կամ իրենց պաշտօնները կը փոխուէին: «Սէնթթը Փոսլ» խաղացողէ մը ինչ կը յուսանք որ ընէ աջ-ձախի կամ աջ հասփ պաշտօնին մէջ:

Հայ խումբին խաղացողները անհաստատ «Պոսլ» լաւագոյն «Փոսլ»-ներն են (մասնաւոր իրենց «կօյն»-ները), սակայն իբր ամբողջութիւն եւս այդ աստիճանին հասնելու համար պէտք է միշտ եւ շարունակաբար — կը կրկնենք — փորձեր ընեն:

Կիրակի օրուան այս պարտութիւնը այս խօսքերուն որքան իրաւացի ըլլալը հաստատեց:

Մ Ա Շ

Անցած երկու ամիսներուն մէջ միութեան անդամներէն երկու սկաւառ ծաղիկ կեանքեր հնձեց մահը մեզմէ:

ա. Պ. ԶԱԻԷՆ Ա.Լ.ԻՔԱՆԵԱՆ

Պարտիզակի Մասնաճիւղին նախկին անդամ, ներկայիս Գաւազ կը գտնուէր իր ծնողաց մօտ: Իրնչև վերջերս եռամսով կը հետաքրքրուէր մասնաւորապէս աթլէթիք խաղերով:

բ. Պ. ԺԱԳ ՓԱՓԱԶԵԱՆ

Բերա-Շիրի Մասնաճիւղէն Լուսաւորչեան վարժարանի աշակերտ, որուն մահը անակնկալ եղաւ իր բոլոր ծանօթներուն:

Միութիւնս եւ իւրազրուութիւնս իրենց ցաւը կը յայտնեն երկու սգակիր ընտանիքներուն:

Նոյնպէս մեր ցաւակցութիւնը կը յայտնենք մեր Գաղափարի Մասնաճիւղի Ատենադպիր Պ. Պետրոս Թիւթիւնեանի իր հօր

ՏԻՔՐԱՆ ԹԻԻԹԻՆՃԵԱՆԻ

մահուան առթիւ:



Անցած Մարտ 20ին, տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի

ԸՆԴՀ. ՊԱՏԿ. ՎՈՂՈՎ.

տարեկան ընդհանուր ժողովը, Շիրի, Գաղափարեան որդանոցին մէջ. Ներկայ էին 16 մասնաճիւղերէն 45 պատգամաւորներ: Օրակարգն էր հաշուետուութիւն, վարչական տեղեկատուութիւն, Ընտրութիւն կեդրոնի վարչութեան և Երագիր կանոնագրի քննութիւն: Մայր դիւանի Ատենապետ ընտրուեցաւ, Պ. Թ. Մեծատուրեան քարտուղար՝ Պ. Հայկ Աբէլեան, հաշուական տեղեկագիրը կարգաց վարչութեան Ատենապետ Պ. Պօզոս Շապոյեան, և պատասխանեց եղած դիտողութիւններուն, պարզելով ապահով պիտե՞նէ մը կարիքը: Վարչական տեղեկագիրը կարգաց կեդրոնի պատասխանատու քարտուղարը, մէջ բերելով բոլոր մասնաճիւղերէ եկած տեղեկագիրներէն ամփոփումներ: Եղած դիտողութիւններուն բոլորովին լաւատես պատասխաններ տուաւ հակառակ Միութեան նիւթական կարիքին:

Ժողովին առաջին մասը վերջացաւ կէսօրին: Պատգամաւորները ճաշեցին որբանոցին մէջ, ճաշի միջոցին եղան կատակխառն խօսակցութիւններ Միութեան գործին շուրջ, լուրջ բանախօսութիւններ եւս տեղի ունեցան:

Ճաշէն վերջանողովը սկսաւ գործի կարդացուեցաւ կեդրոնի վարչութեան հրատարականը. Ժողովը փափաք յայտնեց որ շարունակեն իրենց պաշտօնը այս շրջանին եւս, սակայն չ'ընդունուեցան իրենց անձնական գրառումները մէջ բերելով: Մայր Գիւմրի շնորհակալութիւն յայտնեց նախորդ վարչութեան և նորին ընտրութեան ձեռնարկեց: Ընտրուեցան Պ. Պ. Ժիրայր Խօրասանեան, Հայկ Ճիգմէճեան, Պօզոս Շապոյեան, Գրիգոր Յակոբեան, Գաւազ Շահինեան, Վահրամ փափաղեան: Պ. Հայկ Ճիգմէճեան տեղադրեց իր սրբապետը իր տեղ ընդունուեցաւ Պ. Արարատ Քրիսեան, իսկ Պ. Գրիգոր Յակոբեան որ բացակա էր նոյն միջոցին, հետեւեալ օր իր հերոսորդականը տուաւ և իրեն յաջորդեց Պ. Հրաչեայ Տէր Ներսէսեան:

Օրագրին մէջ գտնուած ծրագիր-կանոնագրի գրի խնդիրը յանձնուեցաւ Քննիչ յանձնախումբի մը որուն պաշտօն տրուեցաւ մինչև 3 Ապրիլ բոլոր մասնաճիւղերուն ղրկել սոյն ծրագրին խմբագրող օրինակներէն՝ քննուելու և իրենց գրաւոր դիտողութիւնները մինչև նոյն ամսոյ 20ը կեդրոն ղրկելու համար, որմէ վերջ տեղի պիտի ունենար նոր ժողով մը, ամէն մասնաճիւղերէն մէյ մէկ պատգամաւորի ներկայութեամբ, որոնք պիտի քննեն, Քննիչ յանձնախումբի բերած ամփոփումը: Ժողովը փակուեցաւ ժամը 4ին:

Կեդրոնի նորընտիր վարչության ժողովը. Գ. Գ. ՆՂԲ-
ՋԱՆ Ա. ՆՊՏ
23 Մարտ 1921 թ.
բաժնանձեռն լինելու
Թիւ 26 Մարտ 26 թ.

ԿԵԴՐՈՆԻ ՎԱՐՉՈՒՄԻՆ.

Ժողովը ընտրեց իր գլխանը, Գ. Գ. Թադևոս ԲՆ-
ճատուրեան (Առեմնապետ) Դաւիթ Նաճիբեան (Առեմնա-
դպիր), Ժիրար Խորասանձեան Դրամապահ, Հրայրեայ
Տէր Ներսէսեան, Վահրամ Փափազեան, Պողոս Նազար-
եան և Արարատ Քրիսեան (Անդամներ): Կարգադրուեցան
Մասնաճիւղերը և այլ տեղերը եկամ գրութիւններ: Ժո-
ղովը յաջորդ նիստին ձգեց յանձնախումբերու ընտրու-
թիւնը և պիտո՞ճէի խնդիրը:

Յաջորդ նիստերուն մէջ (28 Մարտ, 4, 11, 18, 25
Ապրիլ. 6, 9, 13, 16, 23 Մայիս) ժողովը գրողեցաւ
իմէջ այլոց հետեւեալ խնդիրներով Նիւ Եօրիի Մանու-
սկի դաւերացում. Սկսուական, Զուրպոյի Արքեպի-
սկոսեան Մարգարիի Գանձախումբերու քննութիւն,
Ռուսոնիի Մանուսկիի դաւերացում. Որ սկսուեցան
հազուսներուն ի հաշիւ Զատիկ առքիւ յօտարապաշտու-
թիւն. Իզմիրի Սկսուական Միութեան հետ միացումի
խնդիր Օսար մարզական գիւղացիներու հետ յարաբե-
ութիւն. Պիւսիկի աղբիւրներ, Կեդրոնի պաշտօնէութեան եւ վճար-
ուած մարզիկներու խնդիր. Կուսակցութիւններու դիմում
18 սարեկանեան վար սկսուեցան իրական շարժումը մե-
ղուներու մասին: Գանձախումբերը կազմուեցաւ Տե-
տեւեալ կերպով.

Ա. ՍԿԱՆՈՒՍԱԿԱՆ. Գ. Գ. Յովհաննէս Հինգրիւսեան,
Գրիգոր Յակոբեան Հակ ձիզուճեան, Արարի Յակոբեան,
Յովհ. Խրեւիկեան:

Բ. ՇՈՒԻՏԱԿԱՆ. Գ. Գ. Արարատ. Քրիսեան, Գ.
Հապրեան:

Գ. ԱԹԻՒԹԻՒԹԻՆ. Գ. Գ. Դաւիթ Նաճիբեան, Դարձիկ
Շիշմանեան, Վահրամ Թէրզեան:

Դ. ՅՈՒԹՊՈՒ. Գ. Վարդ. Փոզարեանի յանձնուեցաւ
կազմելու համար:

ՆՈՒՄԱՐԱՆԵՐ ԴՆԻՎՈՒՄ

Հ. Մ. Ա. Մ.
Նոր մասնաճիւղեր
հիմնուեցան Մալ-
կարա, Ռուսոն, Գուլի, (Կեդր Արարատ), Նիւ Եօր, Գե-
ղարշապէտ:

ՀԱՆԳԻՆՆԵՐ

Ա. Դատը Գիւղի Մասնաճիւղի սեփական սրահին
մէջ սարքուեցաւ Մարտ 5ին
նիստի վարձանագէտ մը:
Կեդրոնի կողմէ Գ. Հ. ձիզ-
մէճեան ներկայ գտնուեցաւ և բանախօսութիւն մը
ըրաւ:

Բ. Բերա-Շիշի Մասնաճիւղին, մարզարանի ճակ-
ութեան ի հաշիւ 17 Մարտ, Աթէթի մէջ ներկայ յառե-
ցաւ Երանաճիկները Վոլոյ Հայ Տրամաթիքի կողմէ
հասոթ գոյացաւ. 783.50 ոսկի:

ՀՍԵ ՍԿԱՆՈՒՍԸ
ՀՍԵՍՍՍՍՍՍՍՍՍՍՍ

Սկսուեցան ըն-
տր թաղերուն մէջ
հաւաքեցին հա-
զուսներ և դրամ: Կեդրոնի գրասենեակը այն հա-
զուսները մարտի 24 հակ կապելու ստուա եւ կը
գտնուի կեդրոնիս մէջ, իսկ հաւաքը 2500 ոսկիի մօտ կը
մայ մեր Հ. Մ. Ա. Մ.ի գանձապետին մօտ:

ՔՐԻՍՏՈՒՍԱԿԱՆ ԳԱՆՁԱԿԱՆ

Մայիս մէկ
Հատիկ Ա. եւ
Բ. օրերուն որք

սկսուեցան սկսուեցան հազուսի և գոյքի ի հաշիւ
քօքարաբաշխութիւն տեղի ունեցաւ. որմէ գոյացաւ
2525 ոսկի 78 1/2 դր. այն գումարը կը մնայ Ազգ. Եւ-
եւմտական կեդր. Գանձախումբի մօտ, դարձածուելու
համար իր նպատակին:

ՆՈՒՄԱՐԱՆՈՒԹԻՆ

Տիար Ռուբէն Ա.
ի ճառանեան իր վա-
զածուիկ որդւոյն

Հաւելի մահուան առթիւ իրեն զնամ անկախութեան
փոխառութեան 10 ոսկիի ստացազիրը նուիրեց Հ. Մ. Ա.
Մ.ի կեդրոնին, նոյնպէս այս առթիւ 5 ոսկի նուիրեց Հ.
Մ. Ա. Մ. Գումարուի Մասնաճիւղին:

ՃԵՂՈՒՄ ԿԸ

Գ. ՎԱՀՐԻՃ ՔԵՆՏԻՐԵԱՆ,
Եսայեան վարժարանի գեղեր-
թիկներէն եւ նոյն վարժարանի

սկսուեցան խումբի փոխ խմբապետ, գնահատելի գոր-
ծուելութիւն ունեցած է, Ամերիկայ մեկնած է պարզա-
պէս իր հայրենի. եւ իր միութեանս անդամ եւ փոխ-
խմբապետ իր ինքնութեան գիրը միայն ունի ձեռքը:

Միութիւնս ՈՅԻԼ ՊԱՇՏՈՆ ԿԱՄ ԳԱՆՁԱՆՈՒԹԻՆ
ՏՈՒՄԸ 2Ի ԻՐԵՆ, ՄԵՐ ՆԻԻ ԵՂՐԻԻ ՄԱՍԵԱՆՆԻՂԻՆ ՄԵՋ
իր կազմակերպիչ եւ սկսուեցան պետ կամ վարիչ,
ինչպէս գրած էր սխալ տեղեկութեան մը վրայ, Ամե-
րիկեան նպաստատարոցի պաշտօնաթերթը Near East
Relief իր Vol. III No. 19 Մայիս 14 թիւին մէջ եւ որ-
մէ արտաստպած էր մեր պաշտօնակիցը Վոլոյ գումարի
Հայն Վճարանալի:

ԿԵԴՐՈՆԻ ՎԱՐՉՈՒՄ

Վաղը Բիկիլ Բարոյ Եղարշապէտ
ըրան մը ընելու համար Բաճանիս
կը մեկնի մեր յարգելի ընդհ. Սկա-
նու խմբապետը Գ. Գրիգոր Յակոբեան, բարի ճամբոր-
դութիւն կը մտաւ իրեն. իր բացակայութեանը ի
րեն կը փոխանորդէ սկսուեցան խմբապետ Գ. Արշակ Գա-
կոբեան:

ՀԱՅ ՍԿԱՆՈՒՍ
ՀԱՍՏԷ. — Խորասանձեան Խան քիւ 26
Սիրիանի — Գ. Պոլիս
HAÏ SCOUT
ORGAN DES SCOUTS ARMÉNIEN
ADRESS. — 26 Horassandjian Han,
Sirkeджи - Constantinople.
Բաճանիս սարեկան 120 դր.
Արասանիս 15 Իրիկ.
Ամերիկայ 1.50 սոլար
ՀԱՍԸ 5 ՂԲԵ.

Հարկէ - խմբապետ
Կարո Նազարեան